Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2026թ. հունիսի 24-ի
N -1925-Լ հրամանի

ՌՈՏԱՑԻԱՅԻ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում և արտաքին գործերի նախարարությանը ենթակա՝ օտարերկրյա պետություններում գործող կառուցվածքային ստորաբաժանումներում (այսուհետ՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին) դիվանագետների ռոտացիայի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Դիվանագետի ծառայությունն ընթանում է ռոտացիայի սկզբունքով՝ արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում առնվազն 18 ամիս, այնուհետև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում՝ երկու տարի իրար հաջորդող աշխատանքային փուլերով: Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայող դիվանագետի պաշտոնավարման ժամկետը անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ տարի ժամկետով:

3. Գլխավոր հյուպատոսի պաշտոնում նշանակվելիս ռոտացիան ընթանում է արտաքին գործերի նախարարությունում կամ ենթակա մարմնում առնվազն մեկ տարի, այնուհետև օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում՝ երեք տարի ժամկետով ծառայելու սկզբունքով: Գլխավոր հյուպատոսի պաշտոնավարման ժամկետը անհրաժեշտության դեպքում կարող է երկարաձգվել առավելագույնը մեկ տարի ժամկետով:

4. Չի թույլատրվում օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում աշխատանքային փուլի ավարտից անմիջապես հետո դիվանագետի նոր նշանակում օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մեկ այլ մարմին:

5. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության ընթացքում դիվանագետի համաձայնությամբ թույլատրվում է դիվանագետի տեղափոխումն օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության այլ մարմին ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով, պայմանով, որ օտարերկրյա պետությունում

դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետի ծառայության ընդհանուր ժամկետը չգերազանցի երեք տարին:

6. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագետի ծառայությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝

1) անձնական դիմումի համաձայն.

2) գործառույթները կատարելու անհնարինության դեպքում.

3) միջազգային իրավունքի նորմերով նախատեսված այլ հանգամանքներ առաջանալու դեպքում.

4) ծառայողական անհրաժեշտության դեպքում:

2. ՌՈՏԱՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

7. Ռոտացիան իրականացվում է անձնակազմի կառավարման վարչության (այսուհետ՝ վարչություն) կողմից վարվող դիվանագետների տեղաբաշխման ծրագրավորման հիման վրա:

8. Դիվանագետների տեղաբաշխման ծրագրավորումը դիվանագետների ռոտացիայի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունների (պաշտոն, պաշտոնավարման ժամկետներ, նախորդ ռոտացիայի վայր, օտար լեզուների իմացություն, մասնագիտական առանձնահատկություններ և այլ անհրաժեշտ տվյալներ) հավաքագրումը, դասակարգումն ու պլանավորումն է:

9. Ռոտացիոն նշանակումը կատարվում է ծրագրային մոտեցմամբ, պաշտոնավարումից առնվազն երկու ամիս առաջ:

10. Ռոտացիան իրականացվում է տարեկան առնվազն երկու անգամ՝ որպես կանոն հունվար-փետրվար և հուլիս-օգոստոս ամիսներին:

11. Վարչությունը, հերթական ռոտացիայի իրականացումից առնվազն հինգ ամիս առաջ, շրջաբերականի միջոցով դիվանագետներին տեղեկացնում է օտարերկրյա պետություններում դիվանագիտական ծառայության մարմիններում համալրման ենթակա թափուր պաշտոնների մասին:

12. Շրջաբերականում նշվում են օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի անվանումը, տվյալ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայություն իրականացնելու համար անհրաժեշտ օտար լեզվի իմացությունը, անհրաժեշտություն դեպքում՝ պաշտոնը, մասնագիտական առանձնահատկությունը, հյուպատոսական գործառույթներ իրականացնելու դեպքում՝ հյուպատոսական գործի իմացությունը:

13. Նշված թափուր պաշտոնի համար հավակնություն ունեցող դիվանագետը վարչություն է ներկայացնում դիմում՝ իր ստորաբաժանման ղեկավարի համաձայնությամբ՝ հաստատված համակարգող նախարարի տեղակալի կողմից:

14. Դիվանագետը դիմումի մեջ նշում է շրջաբերականում ներառված երեք թափուր պաշտոն:

15. Շրջաբերականում նշված վերջնաժամկետի ավարտից հետո՝ հնգօրյա ժամկետում, վարչությունը դիմումները ամփոփում և ներկայացնում է գլխավոր քարտուղարին:

16. Գլխավոր քարտուղարը, արտաքին գործերի նախարարի հետ համաձայնեցմամբ, կատարում է ընտրություն՝ համապատասխան թափուր պաշտոնները համալրելու վերաբերյալ: Ընտրությունը կատարվում է՝ այդ թվում հաշվի առնելով շրջաբերականում նշված տվյալ պաշտոնի համար պահանջներն ու չափանիշները, ինչպես նաև դիվանագետի ունակությունները, մասնագիտական առանձնահատկությունները, համապատասխան օտար լեզվի իմացությունը, հյուպատոսական գործառույթներ իրականացնելու դեպքում՝ հյուպատոսական գործի իմացությունը:

17. Այն դեպքում, եթե դիվանագետը իր դիմումում նշված թափուր պաշտոնները համալրելու համար չի ընտրվում, ապա վարչությունը, գլխավոր քարտուղարի հետ համաձայնեցմամբ, կարող է գրավոր առաջարկել ռոտացիայով համալրման այլ տարբերակ՝ դիվանագետի կողմից ընտրության իրավունքով:

18. Այն դեպքում, եթե դիվանագետը, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետով ենթակա է ռոտացայի, սակայն չի ներկայացնում դիմում, ապա վարչությունը, գլխավոր քարտուղարի հետ համաձայնեցմամբ, դիվանագետին կարող է գրավոր առաջարկել ռոտացիայով համալրման երկու տարբերակ՝ դիվանագետի կողմից ընտրության իրավունքով:

19. Առաջին անգամ ռոտացիայի սկզբունքով օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին դիվանագիտական ծառայության մեկնելիս, վարչությունը, գլխավոր քարտուղարի հետ համաձայնեցմամբ, դիվանագետին գրավոր առաջարկում է մեկ տարբերակ:

20. Սույն կարգի 17–19–րդ կետերում նշված առաջարկներից հրաժարվելու դեպքում՝ դիվանագետը, «Դիվանագիտական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով, ենթարկվում է կարգապահական տույժի՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու համար:

21. Ռոտացիայի սկզբունքով գլխավոր հյուպատոսի պաշտոնում նշանակվելիս, գլխավոր քարտուղարը, նախարարի տեղակալի հետ համաձայնեցված առաջարկությունը ներկայացնում է արտաքին գործերի նախարարին:

22. Արտաքին գործերի նախարարությունում առաջացող թափուր պաշտոնները ռոտացիոն սկզբունքով համալրելու համար վարչությունը, շրջաբերականի միջոցով օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում ծառայության ժամկետը լրացող դիվանագետներին երեք ամիս առաջ տեղեկացնում է համալրման ենթակա թափուր պաշտոնների մասին:

23. Համալրման ենթակա թափուր պաշտոններից որևէ մեկը զբաղեցնելու համար դիվանագետը վարչություն է ներկայացնում դիմում՝ նշելով երեք ստորաբաժանում:

24. Վարչությունը, շրջաբերականում նշված դիմումների ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո, հնգօրյա ժամկետում ամփոփում է թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և ներկայացնում գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը, պաշտոնի նշանակման վերաբերյալ հրամանների նախագծերը համաձայնեցնելով համակարգող նախարարի տեղակալի հետ, ներկայացնում է արտաքին գործերի նախարարին:

25. Եթե դիվանագետը շրջաբերականում նշված թափուր պաշտոնները համալրելու համար չի ընտրվում կամ դիմում չի ներկայացնում, վարչությունը, համաձայնեցնելով գլխավոր քարտուղարի հետ, առաջարկում է թափուր պաշտոնների ցանկից մեկ տարբերակ՝ հաշվի առնելով նաև դիվանագետի նախընտրած տարբերակը:

26. Գլխավոր քարտուղարը թեկնածուների վերաբերյալ առաջարկությունը երկօրյա ժամկետում ներկայացնում է արտաքին գործերի նախարարին:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2026թ. հունիսի 25-ի
N -1925-Լ հրամանի

ՑԱՆԿ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

Արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտական ծառայության պաշտոններ	Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնում դիվանագիտական ծառայության պաշտոններ
հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար (վարչության պետ)	գործերի հավատարմատար, դեսպանորդ–լիազոր նախարար, գլխավոր հյուպատոս
հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի խորհրդական, հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի վարիչ (պետ)	խորհրդական, հյուպատոս
հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման կամ ենթակա մարմնի բաժնի խորհրդական, առաջին քարտուղար	առաջին քարտուղար, փոխհյուպատոս
երկրորդ քարտուղար	երկրորդ քարտուղար
երրորդ քարտուղար	երրորդ քարտուղար
կցորդ	կցորդ